մերաղնեայ մանկուոյն՝ — որոյ համար փոխանակ առաւել քան զառաւելն նպաստամատոյց՝ ջանադիր և նախանձախնդիր յաւէտ կանգնելոյ՝ ընդհակառակն զրկանք հասուցած է յիշեալ Ն. Պ. Աղաբէգեանց՝ նորին սեպհական մի դուռարը 150 ռուբլեաց (քսան և երկու հատ Օսմանեան ոսկւոյ չափ) զլանալով վերադարձուցանել և հատուցանել, թողուցք տոկոսիքը, որով և յաւիտենական նախատանաց արժանանալ ունի, — զիջանք հաղորդել մեր սիրելի ազգայնոց՝ ի խրատ և ի զգուշութիւն այլոց)։

ԹԱՏՐՈՆ ՄԵՐԱԶՆԵԱՑ ՈՒՍԱՆՈՂԱՑ Ի ՄՈՍԿՈՎ.

Խմբագրոնէն Արարաց Մամագրոյ.

Ամսոյս 18ին Մոսկվայի ուսանողները բաղդաւորութիւն ունեցան մի թատերական խաղարկութիւն ներկայացնելով, տեսնել տեղւոյս բոլոր Հայերին միացած և ժողոված մի մարդասիրական գործի նպաստելու իւրեանց նիւթական օժանդակութեամբ։

Խաղարկութիւնը Հայ և Ռուս լեզուով էր։ Հայկական Թատրոնի համար ընտրել էին ի Տէր Հանդուցեալ Պեշիկթաշլեանի «Վահէ» ողբերգութիւնը։ Ճշմարիտ է, այս ողբերգութեան մէջ հեղինակի բանաստեղծական քնարի նուրբ թելերը ազդումն Հայի ականջին ազգասիրութեան զգացմանց քաղցր ձայներ, ինչպէս և նորա բոլոր քերթուածների մէջ. սակայն թեմական արուեստի մի քանի էական պայմանները պահպանած չը լինելով, ներկայացումնքը շատ դժուարութիւն ունէր։ Այսու ամենայնիւ ուսանողների յօժար կամքը դժուարութիւնները յաղթել էր. զլխաւորապէս կատարեցին, ուսանող բժիշկ Պ. Արամեան, «Վահէի», դերը, ուսանող իրաւաբաններ Պ. Տէր Յովհաննէսեան, Արտաւազդինը և Պ. Մանուկեան, Զայրմայրինը։

Ռուսական ներկայացման մէջ հասարակաց գործին նպաստելու համար մասնակից էին օրիորդ Սողոմէ Ստեփանեանը, և օրիորդք Լէնգոյդները։ Ուսանողները յայտնումն իւրեանց խորին և անկեղծ շնորհակալութիւնը յիշեալ օրիորդներին՝ նախ՝ նոցա վերին աստիճանի ճարտար և հմուտ խաղի և երկրորդ՝ նոցա կամաւոր պատրաստութեան համար։

Խաղարկութիւնը աւարտեցաւ երեկոյեան 10 ժամին և յետոյ սկսվեցաւ Պարահանդէս (Балъ), որ տևեց մինչև երկու ժամը։ Այստեղ ժողովված էին տեղւոյս բոլոր Հայերը և բոլորի երեսին դրոշմված էին ուրախութեան և ներքին գոհունակութեան նշաններ։

Ուսանողները պարտք են համարում յայտնել իւրեանց խորին յարգութիւնը և շնորհակալութիւնը նոցա, որոնք բանիւ և գործով սատարեցին այս գործին, որ ձեռնարկված էր բարեգործական նպատակով, չքաւոր Հայ ուսանողներին հնար և միջոց տալու մտքով —, նախ Մեծ. Պ. Յովհաննեանին որ իւր այցելութեամբ և նշանաւոր նուիրատվութեամբ ցոյց տվեց իւր համակրութիւնը և ուշադրութիւնը դէպ ի Հայ ուսանողները։ Մեծ Պ. Ստեփանեանի ընտանեաց, որոց եռանդուն ջանքով և նուիրատվութեամբ գործը սկսվեց և ի կատար հասաւ. և բոլորեցունց, որոնց համար թանկ ու նուիրական է Հայը, հայութիւնը և նոցա զարգացման նպատակով ձեռնարկված գործերը։

Նամակիս Ամագրոյդ էջերի մէջ տեղի տալ խնդրելով ամենախոնարհ յարգանք,

Մնամ

Ո-ասանող Հայ— Ռոքէկամ։

Յ.Գ. Թատրոնից ստացած ամբողջ եկամուտն էր 715 ռ. դուրս հանելով 251 ռ. եղած ծախսը, յօգուտ չքաւոր ուսանողներին մնաց 464 ռ։

25 Դեկտեմբերի 1874 -դ
ի Մոսկվա։